Project funded by EUROPEAN UNION

AGREEN Community for climate-smart agriculture

Black Sea CROSS BORDER COOPERATION

ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

19.12.2022

Բազմապատկիչների միջոցառում

«Ձեռներեցությունը Սևծովյան ավազանում հանուն կլիմային ուղղված խելացի գյուղատնտեսության» առարկայական ծրագրի և կրթական նյութերի ներկայացում

2022 թվականի դեկտեմբերի 19-ին առցանց հարթակում (ZOOM) տեղի ունեցավ «Ձեռներեցությունը Սևծովյան ավազանում հանուն կլիմային ուղղված խելացի գյուղատնտեսության» բազմապատկիչների միջոցառումը, որի հիմնական նպատակը առարկայական ծրագրի և կրթական նյութերի ներկայացումն էր: Հանդիպմանը ներկա էին շուրջ 50 ներկայացուցիչներ տարբեր թիրախային խմբերից՝ պետական մարմիններ, ՀԿ-ներ, բարձրագույն կրթական և հետազոտական հաստատություններ, բիզնեսին աջակցող կազմակերպություններ, ՓՄՁ-ներ և հանրության ներկայացուցիչներ:

Նշենք, որ 2022 թվաականի նոյեմբերի 22-ից 25-ը Դոբրուդջայի ագրարային և բիզնես դպրոցը (DABS) հյուրընկալել էր բազմապատկիչներ 6 համագործակից երկրներից մասնակիցելու Դոբրուդջայի Դոբրիչ քաղաքում անցկացվող միջազգային դասընթացին, որը նվիրված էր Սևծովյան ավազանում (ՍԱ) կլիմային ուղղված խելացի գյուղատնտեսության ձեռներեցությանը: Հայկական շուրջ 8 մասնակիցներ (բազմապատկիցներ) մասնակցել են առցանց տեսակոնֆերանսի միջոցով: Միջոցառումը նպատակաուղղված էր ներկայացնելու և փորձարկելու «Ձեռներեցությունը հանուն Սևծովյան ավազանում կլիմային ուղղված խելացի գյուղատնտեսության» վերապատրաստման դասընթացը, ինչպես նաև երիտասարդ բաազմաապատկիչներին նախապատրաստել դասընթացն իրենց երկրներում կազմակերպելու և անցկացնելու համար:

Տեղական աշխատաժողովը, որը կազմակերպվես հայաստանյան բազմապատկիչների կողմից, դեկտեմբերի 19-ին, նպատակ ուներ ներկայացնելու առարկայական ծրագրի 6 մոդուլները:

Աշխատաժողովին ողջույնի խոսքով հանդես եկավ AGREEN նախագծի ազգային համակարգող Լիլիթ Ավդալյանը: Այնուհետև AGREEN Փորձառության համայնքի համակարգող Աննա Հովհաննիսյանը ներկայացրեց միջոցառման օրակարգը, նախագծի ակնկալվող արդյունքները տեղական և միջազգային մակարդակներում, փորձառության համայնքը և թվեց «Ձեռներեցությունը Սևծովյան ավազանում հանուն կլիմային ուղղված խելացի գյուղատնտեսության» կարճաժամկետ դասընթացի 6 մոդուլները, որոնք ավելի ուշ մանրամասնորեն ներկայացրին նախագծի բազմապատկիչները: Այնուհետև AGREEN նախագծի առցանց հարթակի զարգացման փորձագետ Սեդա Ջանազյանը ներկայացրեց նախագծի վեբ կայքն ու առցանց հարթակը՝ հիմնական շեշտը դնելով լոգիստիկ կենտրոնների,

շարունակելի

դրանց նպատակների և գործառույթների վրա, ներկայացվեցին բոլոր հնարավորությունները տեղացի արտադրողների և արտահանողների համար, թե ինչպես կարող են մասը դառնալ լոգիստիկ կենտրոնների առցանց հարթակի:

Հաջորդիվ AGREEN նախագծի փորձագետ Լուսինե Նալբանդյանը ընդհանուր ներկայացրեց «Ձեռներեցությունը Սևծովյան ավազանում հանուն կլիմային ուղղված խելացի գյուղատնտեսության» կրթական ծրագիրը, որում հայաստանյան թիմը պատասխանատու էր ֆերմերային տնտեսությունների հարակայուն կառավարման մոդուլի մշակման, ինչպես նաև մյուս 5 մոդուլներում հայաստանյան պատկերը արտացոլելուհամար:

1-ին մոդուլը կլիմային ուղղված խելացի գյուղատնտեսության հայեցակարգի և մոտեցման մասին էր, որը ներկայացրեց բազմապատկիչ Տաթևիկ Սարգսյանը: Այս մոդուլի հիմնական թեմաներն էին կլիմայի փոփոխությունը, վերջինիս ազդեցությունը գյուղատնտեսության վրա և այդ ազդեցություններին հարմարվելու ռազմավարությունները: Այնուհետև ներկայացրեց կլիմային ուղղված խելացի գյուղատնտեսության գաղափարը և Սևծովյան ավազանում կայուն արտադրության համար անհրաժեշտ կլիմայապես խելացի մոտեցումները, որոնք կօգնեն բարձրացնել գյուղատնտեսության ոլորտում մրցունակությունը և մեղմացնել կլիմայի փոփոխությունը:

2-րդ մոդուլը կլիմայադիմակայուն ագրոպարենային արժեշղթաների մասին էր, որը պատրաստել էին բազմապատկիչներ Վարդան Քառյանը և Միլենա Կարապետյանը: Վարդան Քառյանը ներկայացրեց արժեշղթաների հայեցակարգի էությունը և դրանց տեսակները՝ նշելով այն խնդիրները, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել արժեշղթաների ստեղծման համար:

3-րդ մոդուլը ներկայացրեց բազմապատկիչ Աննա Ավագյանը, որը վերաբերում էր ֆերմերային տնտեսությունների հարակայուն կառավարմանը: Այս մոդուլի նպատակն էր տրամադրել բազային տեղեկություն ֆերմերային տնտեսությունների հարակայուն կառավարման սկզբունքների վերաբերյալ և ներկայացնել այն գործնական մոտեցումները, որոնք նպաստում են ոլորտում նոր փիլիսոփայության անցմանը:

4-րդ մոդուլը կլիմային ուղղված խելացի գյուղատնտեսության ֆինանսավորման մասին էր, որը ներկայացրեց բազմապատկիչ Տաթևիկ Հայրապետյանը: Նա նշեց, որ կլիմային ուղղված խելացի գյուղատնտեսության ֆինանսավորումը կարելի է օգտագործել որպես զարգացման հնարավորություն: Ֆինանսավորման համար առանձնացրեց մի քանի աղբյուրներ, որոնցից են սուբսիդիաները, ներդրումները, դրամաշնորհները և բանկերը:

5-րդ մոդուլը վերաբերում էր գյուղմթերքի հարակայուն շուկայավարմանը, որը ներկացրեց բազմապատկիչ Ջուլիետա Պետրոսյանը: Նա ներկայացրեց շուկայավարման դերը գյուղատնտեսության ոլորտում կայուն արտադրության ապահովման գործում:

Բազմապատկիչ Նաիրի Գալստյանը ներկայացրեց վերջին՝ 6-րդ, մոդուլը, որը միջազգային առևտրի և համագործակցության մասին էր: Նա նշեց գյուղատնտեսական առևտրի կարևորությունը և ժամանակակից առևտրի մոդելները, ապրանքների գնային

շարունակելի

տատանումները, սակագները և միջազգային վճարումներ կատարելու հիմնական եղանակները:

Ամբողջ միջոցառման ընթացքում պարբերաբար հնչեցին հարցեր ուղղված ոչ միայն բազմապատկիչների ելույթներին, այլև թեմատիկ առկա խնդիրներին և մարտահրավերներին, որոնցից մեկը վերաբերում էր Հայաստանի լոգիստիկ կենտրոնների դերի բարձրացման կարևորությանն ու եվրոպական գործելաոճին համապատասխանելուն, որպեսզի ապրանքների վաճառքը արտադրողների համար ավելի հեշտ և սահուն կերպով իրականացվի լոգիստիկ կենտրոնների միջոցով: Վերջում մասնակիցներին տրամադրվեցին առցանց գնահատման ձևեր՝ իրենց կարծիքը աշխատաժողովի վերաբերյալ արտահայտելու համար:

Ավարտ

Joint Operational Programme Black Sea Basin 2014-2020 is co-financed by the European Union through the European Neighbourhood Instrument and by the participating countries: Armenia, Bulgaria, Georgia, Greece, Republic of Moldova, Romania, Turkey and Ukraine.

This publication was produced with the financial assistance of the European Union. Its contents are the sole responsibility of ICARE Foundation and do not necessarily reflect the views of the European Union.